

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Լ. Կարապետյան

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԱՆՏԻՊ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ

Հայ նոր գրականության հիմնադիր, մեծ լուսավորիչ և դեմոկրատ Խ. Արովյանի գրական հարուստ ժառանգության մեջ ուշագրավ տեղ են գրավում նրա գերմաներեն երկերը, որոնք պահվում են Հայկական ՍՍՌԻ Գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի Գրական թանգարանում, Խ. Արովյանի արխիվում: Դրանց մեջ կան գերմաներեն բանաստեղծություններ, հոդվածներ, ակնարկներ, ուսումնասիրություններ, Արովյանի գրած և ուրիշներից ստացված նամակներ, զանազան փաստաթղթեր և այլն: Վերոհիշյալ նյութերից միայն նամակների մի մասն է լույս տեսել Եր. Շահազիզի կազմած «Դիվան Խ. Արովյանի» երկու հատորներում: Մնացած նյութերը, այդ թվում նաև Արովյանի մի քանի հոդվածները, դեռևս անտիպ են և անժանոթ հասարակությանը: Մինչդեռ դրանք հարուստ նյութ են տալիս մեծ լուսավորչի կյանքն ու ստեղծագործությունը ուսումնասիրելու համար¹:

Քննության առարկա հոդվածները² մի անգամ ևս ապացուցում են, թե որքան է սիրել մեծ լուսավորիչը իր հայրենիքը, իր ժողովրդին, թե որքան լավ է ուսումնասիրել նա հայ և հարևան ժողովուրդների պատմությունը, որքան է նա մտահոգված եղել Հայաստանի և հայ ժողովրդի ճակատագրով:

1

Դորպատում գտնված տարիներին Արովյանը մտադրություն է ունեցել գերմաներեն մի աշխատանք գրել և դրանով եվրոպացիներին ծանոթացնել իր հայրենիքի ու հայրենակիցների հետ. 1834 թ. նա գրում է մի համառոտ ակնարկ հայերի մասին: Այդ աշխատության ինքնագիրը սևագիր վիճակում է, դժվար ընթեռնելի, ունի բազմաթիվ ջնջումներ և հավելումներ: Արովյանի ֆոնդում այդ աշխատությունը պահպանվում է 40 թվահամարի տակ և պայմանական ձևով վերնագրված է. «Համառոտ ակնարկ հայերի մասին»:

«Համառոտ ակնարկ հայերի մասին» աշխատության առաջաբանում Արովյանը խոսում է հայ և, հատկապես, եվրոպացի գիտնականների՝ հայ ժողովրդի վերաբերյալ գրած աշխատությունների մասին և դրանց թերությունը համարում

¹ Խ. Արովյանի գերմաներեն բոլոր ձեռագրերը, այդ թվում և հոդվածները, թարգմանել է Կոստանդին Արովյանը:

² Խ. Արովյանի գերմաներեն հոդվածները, ուսերեն և հայերեն գրված հոդվածների, ճանապարհորդական նկարագրությունների, նամակների և այլ փաստաթղթերի հետ կազմում են նրա Երկերի լիակատար ժողովածուի ակադեմիական հրատարակության VI հատորը, որը Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտը պատրաստում է հրատարակության:

այն, որ այդ հեղինակները անտեղյակ են հայ ժողովրդի ներկա վիճակին: Օգտավետ գործ գրելու համար նա խորհուրդ է տալիս՝ անցյալի պատմությունը նկարագրելիս չմոռանալ ժողովրդի առկա քաղաքական, կուլտուրական և տնտեսական վիճակը: Աբովյանն իր դժգոհությունն է հայտնում Մխիթարյան միաբանության հրատարակություններից, առանց տալու վերջիններիս անունները: Նա սուր քննադատության է ենթարկում հայ միսիոներներին, որոնք հանդերձում են աշխատություններ գրել հայերի մասին՝ կտրված լինելով հայրենիքից, չիմանալով նույնիսկ իրենց մայրենի լեզուն և միայն հարևանցի, աղավաղված տեղեկություններ ունենալով հայ ժողովրդի ներկա վիճակի վերաբերյալ: Աբովյանը նշում է, որ նրանք կեղծ, մտացածին նկարագրություններով խեղաթյուրում են փաստերը՝ հայ ժողովրդին վերագրելով ապականված բարքեր ու սովորություններ և որ նրանք այդ ձևով ուղղում են վրեժխնդիր լինել հայերից, որովհետև պապի իշխանությունը Հայաստանում տարածելու նպատակով իրենց կատարած ճանապարհորդությունների ընթացքում ամենուրեք հանդիպում են անհաջողությունների:

«Ինչ վերաբերում է պարոնայք միսիոներներին,— գրում է Աբովյանը,— նրանք իրենց գալուն պես փնտրում են մի լավ կազմակերպված եկեղեցի, մի լավ աստվածավախ կրոնական ոգի: Ինչ որ չի վերաբերում աստծուն ու կրոնին, դա նրանց գործը չէ»¹:

Այստեղ տեղին է նշել, որ կաթոլիկ եկեղեցուն Աբովյանը ջախջախիչ հարված է հասցրել նաև հետազայում գրած իր «Ամերիկո լիս քցիլը» պատճառ-աշխարհագրական ակնարկում, որտեղ նա ապացուցում է, որ պապականությունը իր օրենքներով և վարած քաղաքականությամբ ոգնում է եվրոպական կապիտալին, իրականացնելու նրա նվաճողական ձգտումները՝ հատկապես փոքր ժողովուրդների նկատմամբ:

«Համառոտ ակնարկ հայերի մասին» աշխատության մեջ Աբովյանն իր վրդովմունքն է արտահայտում նաև եվրոպական պատմաբանների նկատմամբ: Նա ազնիվ դայրոլթով է նշում այն հանգամանքը, որ եվրոպական պատմաբանները չեն ուղղում տեսնել հայոց պատմության հարուստ անցյալը, մի պատմություն, որը լի է իր հայրենիքը պաշտպանելու համար օտարերկրյա բռնակալների դեմ պայքարի ելած հայ ժողովրդի սխրագործությունների բազմաթիվ օրինակներով:

Մեծ լուսավորիչը միաժամանակ ցույց է տալիս, որ հայ ժողովուրդը եղել է աշխատասեր ու խաղաղասեր ժողովուրդ, մինչդեռ Եվրոպայի գիտնականները նրան մեծ մասամբ ներկայացրել են որպես «հայրենազուրկ մի առատրականի»:

Եվրոպական գիտնականների նկատմամբ ունեցած իր վրդովմունքը Աբովյանն, ինչպես հայտնի է, արտահայտել է նաև իր «Վերք Հայաստանի» վեպում և «Ե վերայ հայրենասիրութեան» նամակաձև աշխատության մեջ: Աբովյանը ցույց է տվել, որ եվրոպական պատմաբանները իրենց աշխատություններում փառաբանելով աշխարհակործան բարբարոսներին, անտեսել են փոքր ժողովուրդներին:

¹ ԴԱ Գրականության ինստիտուտ, Գրական թանգարան, Ն. Աբովյանի ֆոնդ, № 40, տես հայերեն թարգմանությունը, էջ 3:

Արովյանը իր «Համառոտ ակնարկ հայերի մասին» աշխատության մեջ գրում է. «Նախ քան հայերի վրա այդպիսի անսիրտ հարձակումներ գործելը թող փորձեն հետաքրքրվել հին աշխարհի այն ժողովուրդներով, որոնք համաշխարհային պատմության կեսը լցրել են իրենց մեծ գործերով»¹:

Օրինակ բերելով ամերիկացի բնիկների հանդեպ եվրոպացիների ունեցած բարբարոս քաղաքականությունը, Արովյանը ցույց է տալիս, թե ինչպես Ամերիկայի բնիկները կորցրել են իրենց ինքնուրույնությունը, ոչնչացել «քաղաքակիրթ» Եվրոպայի ճնշման տակ:

2

Արովյանի գերմաներեն երկրորդ անտիպ հոգվածը կրում է «Պարսկաստանի և Ռուսաստանի միջև ծագած պատերազմի նախապահին մոտ 1825 թ. վերնագիրը»²: Հոգվածը գրված է մի փոքրիկ տետրում. Գրական թանգարանում պահպանվում է Արովյանի ֆոնդի 39 թվահամարի տակ: Ամենայն հավանականությամբ գրված է 1834—35 թթ., «Համառոտ ակնարկ հայերի մասին» աշխատությունից հետո:

Հիշյալ հոգվածի նյութը Արովյանը վերցրել է 1826—1827 թթ. ռուս-պարսկական պատերազմի միջոցին Ղարաբաղիսայի շրջակայքում տեղի ունեցած իրադարձություններից: Ակնարկը հետաքրքրական է այն տեսակետից, որ ընդգրկում է հայ ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցող մի ժամանակաշրջան, երբ պատերազմը վերջ դնելով պարսկական բռնակալությանը Հայաստանում, հայերի բախտը կապեց ռուս մեծ ժողովրդի հետ: Ակնարկը ուշագրավ է նաև նրանով, որ հեղինակը ականատես է եղել բոլոր այն դեպքերին, որոնց մասին նա պատմում է: Արովյանը ցույց է տալիս ռուս-պարսկական պատերազմների ժամանակ հայ ժողովրդի կրած տառապանքները, պարսկական բռնակալների խորամանկ ու դաժան քաղաքականությունը:

Ռուս-պարսկական պատերազմի ժամանակ հայ ժողովրդի կրած տառապանքների ու զրկանքների տխուր նկարագիրը, ինչպես հայտնի է, Արովյանը մեծ վարպետությամբ տվել է «Վերք Հայաստանի» վեպում: Արովյանի գերմաներեն նյութերի մեջ այս ակնարկը ուշագրավ է իբրև «Վերք Հայաստանի» վեպի մի շարք դրվագների պատմական իլլուստրացիա: Այսպես, օրինակ վեպում կարևոր տեղ գրավող Խղարաբաղիսայի դեպքերի մանրամասն շարադրանքը Արովյանը տվել է այս ակնարկում:

Արովյանը հանդամանորեն նկարագրում է պատերազմին նախորդող ժամանակաշրջանը:

Հասան խանն այդ ժամանակ ապրում էր Ապարանում և թեպետ բարեկամական հարաբերության մեջ էր Ղարաբաղիսայի գավառապետ Զավարիա միրզայի³ հետ և վաղուց չէր, որ վերջինս վայելել էր նրա հյուրընկալությունը:

¹ ԳԱ Գրականության ինստիտուտ, Գրական թանգարան, Խ. Արովյանի ֆոնդ, 40. տես հայերեն թարգմանությունը, էջ 6:

² Ավելորդ չենք համարում նշել, որ այստեղ Արովյանը շփոթում է պատերազմի ժամանակը. ռուս-պարսկական պատերազմը սկսվել է ոչ թե 1825 թ., այլ 1828-ի հուլիսին: Հետաքրքրական է, որ այդ նույն սխալը Արովյանը կրկնել է նաև «Առ բարեսնունդ և սիրելի աշակերտս իմ» անտիպ աշխատության մեջ և «Վերք Հայաստանի» վեպում: Ըստ երևույթին սխալը զալիս է հենց այս աշխատությունից:

³ «Վերք»-ի Սավարզամիրզան նույն անձնավորությունն է:

սակայն խորամանկ խանր գաղտնի պատրաստվում է հարձակվելու հիղարա-
քիթիսայի վրա, հրի ու սրի մատնելու նրա հայ բնակիչներին: Ակնարկից
պարզվում է, որ խղարաքիթիսեցիները նախօրոք իմանալով Հասան խանի
մտադրությունների մասին, որոշում են ուժեղ դիմադրություն ցույց տալ, և գա-
վառապետի մոտ գնալով՝ նրանից զենք են պահանջում: Վերջինս չհավատա-
լով, որ իր բարեկամը կարող է դժել իր խոստումը, գյուղացիներին հետ
է ուղարկում՝ խստորեն մերժելով նրանց պահանջը: Խղարաքիթիսայի բնա-
կիչները ստիպված են լինում սեփական ուժերով ամրություններ կառուցել և
մինչև վերջ դիմադրում են թշնամուն: «Սարսափելի էին այնտեղ կատարված
դեպքերը, — գրում է Աբովյանը, — տներ էին քանդում և այրում, եղած-չեղածը
հափշտակում, երեսաներին, երկսեռ հասակավոր մարդկանց կոտորում և
միայն երիտասարդներին խնայում՝ գերի վերցնելու և մահմեդական դարձնելու
համար»¹:

Ակնարկում ուշագրավ են Աբովյանի խորհրդածությունները ընդհանրապես
պատերազմների մասին, ուր մեծ հումանիստը հանգում է այն եզրակացու-
թյան, որ բոլոր պատերազմների ժամանակ տուժողը վերջ ի վերջո մնում է
«ժողովրդի աշխատավոր, արտադրող դասակարգը»: Խղարաքիթիսայի դեպքե-
րին հաջորդում է հայերի գաղթը, որ Աբովյանը նկարագրում է շատ ստրա-
ճամիկ տեսարաններով: Նահանգական իշխանության հրամանով Փամբակի
շրջանի բոլոր հայերը պետք է հավաքվեին Ղարաքիթիսա, գոնե իրենց կյանքը
փրկելու համար: Ժողովուրդը թողնում էր արդեն հնձելու պատրաստ, հասուն
արտերը, տունը, անասունները և առանց ապրուստի նվազագույն միջոցի գաղ-
թում:

Աբովյանը ցույց է տալիս, թե ինչպիսի հերոսական դիմադրություն են
ցույց տալիս Ղարաքիթիսեցիները: Հասան խանը ամեն միջոցի դիմում է, բայց
չի կարողանում ընկճել նրանց հերոսական ոգին: Ռուսական փոքրաթիվ զոր-
քը թնդանոթային համազարկերով ստիպում է Հասան խանին նահանջել:

Վերևում ասացինք, որ Աբովյանը դեպքերը նկարագրում է իբրև ականա-
տես. նա անձամբ գտնվել է Ղարաքիթիսայում և բաժանել իր հայրենակից-
ների համար ստեղծված ծանր վիճակը:

Պատերազմի նախօրյակին լուրեր են հասնում Աբովյանին այն մասին,
թե Երևանի նահանգի ամբողջ հայ բնակչությանը պարսկական կառավարու-
թյունը գաղթեցնում է Իրան: Աբովյանը որոշում է ճանապարհվել դեպի Հաղ-
պատ, Եփրեմ կաթողիկոսի մոտ, թույլտվություն խնդրելու նրանից՝ միանա-
լու Իրան գաղթող հայ գաղթականներին, ուր գտնվում էին նաև նրա հարա-
պատները:

3

Աբովյանի գերմաներեն երրորդ անտիպ հոդվածը վերաբերում է հայերի
և անդրկովկասյան մյուս ժողովուրդների տնտեսական-կուլտուրական վիճա-
կին:

Հոդվածն անվերնադիր է, սևագիր վիճակում և պահպանվում է Գրական
թանգարանի Աբովյանի ֆոնդում, № 49 թվահամարի տակ: Թեպետ անթվակիր
է, բայց հենվելով նրա մեջ եղած այն խոսքերի վրա, թե «պատրաստվում եմ
վերադառնալ հայրենիք», կարելի է հաստատ ասել, որ գրված է 1836 թ.:

¹ ԿԱ Գրականության ինստիտուտ, Գրական թանգարան, Խ. Աբովյանի ֆոնդ, № 39,
տես հայերեն թարգմանությունը, էջ 8:

Նկարագրելով հայերի և Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական հետամնաց վիճակը և առաջադրելով այն բարելավելու միջոցառումները, Աբովյանն այս հոդվածում ցայտուն կերպով դրսևորում է իր դեմոկրատական, լուսավորական հայացքները և քաղաքական օրինենտացիան:

Նա ցույց է տալիս անդրկովկասյան ժողովուրդների և հատկապես հայ ժողովրդի աշխատավորական խավերի տնտեսական և կուլտուրական ցածր մակարդակի օբեկտիվ պատճառները՝ կապելով այն նրանց քաղաքական վիճակի հետ:

Դարեր շարունակ կրելով հետամնաց ֆեոդալական Պարսկաստանի և Թյուրքիայի ծանր լուծը, հայ աշխատավոր ժողովուրդը հնարավորություն չի ունեցել բարձրացնելու իր տնտեսությունը, այն դնելու այնպիսի հիմքերի վրա, որպեսզի նրա համար ավելի հեշտ լինեի մշակել հողը և մաքսիմալ շահերով օգտագործել երկրի բնական հարստությունները: «Չնայած նրա (հայ ժողովրդի — Լ. Կ.) ամեն տեսակ ջանասիրության և աշխատասիրության, — գրում է Աբովյանը, — նամանավանդ գյուղացիությունը այնքան ենթակա է եղել չքավորության և սովի, որ շատ վայրերում իսկապես ցավալի է տեսնել, թե որքան չքավոր և թշվառ է ապրում»¹: Աբովյանի կարծիքով դրա պատճառներից մեկը հանդիսացել է «նախկին կառավարությունը, որը նրա արյունն է ծծել մինչև վերջին կաթիլը»²:

Ապրելով հեռավոր Դորպատում, Աբովյանը ջատ տխուր հիշողություններ ուներ սիրելի հայրենիքի աշխատավոր բնակչության կյանքի մասին: «Սրտիցդ արյուն է հոսում, երբ տեսնում ես նրանց արտաքին հագուստը, որը երկրի շատ վայրերում ավելի շատ մի ցնցոտիներից կարկատած վերնազգեստի է նման, քան հագուստի»³:

Ինչպես իր մյուս գրվածքներում, այս հոդվածում ևս Աբովյանը Անդրկովկասի և Ասիայի ժողովուրդների բախտը կապում է ռուս ժողովրդի հետ: Նրա խորը համոզումն է, որ միայն ռուսաստանի հուժկու բազուկը՝ կարող է Անդրկովկասի ժողովուրդներին փրկել խավարից, բռնությունից և ֆիզիկական բնաջնջումից: Հայ ժողովուրդը երախտապարտ է իր ազատության համար և հազարավոր սերունդներ պետք է հաղորդեն այդ փառքը սերնդե-սերունդ և իրենց սրտերի մեջ մի հավիտենական հուշարձան կանգնեցնեն այդ առթիվ»⁴:

Հոդվածում Աբովյանը մանրամասն նկարագրելով Անդրկովկասի աշխատավոր գյուղացիության չքավոր վիճակը, իր առաջարկներն ու ծրագիրն է առաջադրում ռուսական կառավարությանը՝ գյուղատնտեսության զարգացման և ժողովրդի վիճակի լավացման համար: Նա նպատակահարմար է գրանում հողի համատեղ մշակումը, երբ մեկը մատակարարում է աշխատող ձեռք, մյուսը՝ անասուն, մեկ ուրիշը գործիք և այլն:

Հաճախակի կրկնվող երաշտի հետևանքով սովի մատնվող բնակչությանը փրկելու համար Աբովյանն առաջ է քաշում Հայաստանի շրջանները ոռոգելու անհրաժեշտության հարցը: Նա ռուսական կառավարությանն առաջարկում է

¹ ԳԱ Գրականության ինստիտուտ, Գրական թանգարան, Խ. Աբովյանի ֆոնդ, 49. տես հայերեն թարգմանությունը, էջ 5:

² Նույն անդում:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ 2:

ընդհանրապես ուսումնասիրել Հայաստանի բնությունը և սովորեցնել գյուղացուն, թե լեռնային վայրերում ինչպես պետք է մշտիկել հողը, դաշտավայրերում՝ ինչպես:

Արտասահմանից ներմուծվող ապրանքները կրճատելու և երկրից դուրս հոսող ոսկին պահպանելու համար Աբովյանը կարևոր գործոն է համարում երկրի սեփական հարստությունների օգտագործումը: Նա հատկապես նշում է մետաքսի, բամբակի, ծխախոտի, զանազան բուսաներկերի մշակման անհրաժեշտությունը, ինչպես նաև հայրենական պտուղների տեղում օգտագործելու խնդիրը:

Աբովյանի առաջադրած ամենակարևոր միջոցառումը, սակայն, «Անդրկովկասյան ժողովուրդների հոգեկան վերածնունդը իրականացնելու և արթնացնելու և դրանով նրանց մեջ մի տեական երջանկություն հաստատելու» համար է՝ կրթություն և լուսավորություն տարածելը: Աբովյանին չեն բավարարում ուսումնական այն հաստատությունները, որոնք գտնվում են Կովկասից դուրս: Այնտեղ սովորողները, նրա կարծիքով, թեպետ մեծ մասամբ հայեր են, բայց քիչ օգուտ են բերում իրենց հայրենի երկրին, որովհետև ուսումնավարտելուց հետո նրանք գյուղ չեն վերադառնում գործելու: Այդպես է վարվում ոչ միայն հարուստը, որն իր արժանապատվությունից ցած է համարում ուսուցչությամբ զբաղվելը, այլև չքավորը: Վերջինս նյութական հնարավորություններ չունենալով, շատ մեծ դժվարությամբ է կրթություն ստանում: Ինականաբար քաղաքում պետք է հնարավորին չափ եկամտաբեր պաշտոն որոնի, որովհետև գյուղի ուսուցչական աշխատանքը նրան նյութական ապահովություն չի խոստանում:

Եվ ահա, որպեսզի հայ գյուղը մեկընդմիջտ ապահովվի ուսուցչական անհրաժեշտ կադրերով, Աբովյանը անհրաժեշտ է գտնում Հայաստանում հիմնել մանկավարժական ուսումնարան: Այստեղ՝ բացի մայրենի լեզվից, ուսերենից, գրականությունից, պատմությունից և ուրիշ գիտելիքներից, Աբովյանն առաջարկում է դասավանդել նաև գյուղատնտեսական, տեխնիկական առարկաներ: Ինստիտուտի սովորողների մի մասը պետք է լինեն չքավոր խավերից՝ Հայաստանի տարբեր շրջաններից հավաքված, որոնք հետագայում կվերադառնան իրենց ծննդավայրը լուսավորություն, կրթություն տարածելու: Աբովյանը բնականաբար մտահոգված է ժողովրդի ավելի չքավոր դասակարգի կրթությամբ, որովհետև հարուստները առանց այդ էլ այս կամ այն կերպ կառողանում են պրագմատություն ձեռք բերել:

Ուսումնարան կառուցելու համար ամենահարմար վայրը Աբովյանը համարում է Քանաքեռը, իբրև քաղաքամերձ մի գյուղի, որն ունի լավ կլիմա և ամենակարևորը՝ գյուղատնտեսությամբ զբաղվելու հնարավորություններ: Մեծ լուսավորիչը առաջնահերթ խնդիր է համարում ինստիտուտը որակյալ ուսուցիչներով ապահովելու հարցը: «Այդպիսով ժամանակի ընթացքում մի այնպիսի գործ գլուխ կգա, որով հազարավոր մարդիկ դժբախտությունից կփրկվեն»¹ գրում է նա: Ուշագրավ է, որ գործի ամբողջ պատասխանատվությունը Աբովյանը վերցնում է իր վրա և խնդրում է կառավարությունից օգնել իրեն նյութական միջոցներով:

Աբովյանի վերոհիշյալ աշխատությունը, ինչպես տեսնում ենք, ոչ թե

¹ Նույն տեղում, էջ 21:

հոգված է սովորական առումով, այլ իսկական մի ծրագիր, որ նա կազմել է ռուսական կառավարությանը ներկայացնելու համար: Աբովյանը ինքն էլ իր աշխատանքը «պլան» է կոչում. «...Հանդգնում եմ կառավարությանը պլաններ առաջադրել իմ ազգի և երկրի համար»: Մեծ հումանիստն այս «պլանով» հույս ուներ իրականացնելու ոչ միայն Հայաստանի, այլև անդրկովկասյան մյուս ժողովուրդների բախտավորությունը:

4

Բոլորովին այլ բնույթ ունի Աբովյանի «Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին» անտիպ աշխատությունը, որի ինքնագիրը Գրական թանգարանում պահպանվում է Աբովյանի ֆոնդի № 38 թվահամարի տակ: Աշխատությունը գրված է 1839—40 թթ.: Ակնարկն ուշագրավ է ազգագրական տեսակետից:

Մանրամասն նկարագրելով Թիֆլիսի հայերի կենցաղն ու ամուսնական սովորությունները, Աբովյանը միաժամանակ բացահայտում է ժամանակի սոցիալական հակասությունները, աշխատավոր բնակչության տնտեսական ցածր վիճակը, ժողովրդի և հոգևորականության հարաբերությունը:

Ակնարկի առաջին մասում Աբովյանը տեղեկություններ է տալիս XIX դարի 20—30-ական թվականների Թիֆլիսի մասին, նկարագրում է քաղաքում կատարված փոփոխությունները՝ վրաստանը Ռուսաստանին միացվելուց հետո:

Հիշատակելով Թիֆլիսում եղած բոլոր ուսումնական հաստատությունների անունները, Աբովյանը սուր քննադատության է ենթարկում Հայկական սեմինարիան, ցույց տալով, որ սեմինարիայում տիրում է սխալաստիկան, ուսուցիչները վատորակ են և աշակերտների հետ պարապում են մանկավարժական սխալ մեթոդներով:

Հմուտ ազգագրագետի նման նա նկարագրում է հարսանեկան սովորություններն իրենց ամբողջ մանրամասնությամբ: Խոսելով հատկապես այն սովորության մասին, երբ հարսանեկան թափորը մոտենում է եկեղեցուն և ընդունված կարգով քահանային փող են նվիրում, որպեսզի նա եկեղեցու դուռը բաց անի և քահանան ու խաչեղբայրը սակարկում են այդ վարձատրության համար, Աբովյանը հեգնանքով գրում է «սուրբ տաճարը դժբախտաբար դարձրել են առևտրի կրպակ»:

Թիֆլիսի հայերի ամուսնական սովորությունների նկարագրությամբ Աբովյանը ցույց է տալիս, որ ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում, ամուսնության հիմքում ընկած է ոչ թե փոխադարձ սերը, այլ փողը, հարստությունը: Կինն իրավունք չունի իր կամքով ամուսին ընտրելու, նրան գրեթե վաճառում են. տղամարդն անպայման հարուստ օժիտով աղջիկ է փնտրում: Աղջկան ամուսնացնելը ծնողների համար այնպիսի ողբերգություն է, որ հաճախ մայրերը անիծել են նրանց ծնված օրը. «ավելի լավ է չումա ծնվի քան աղջիկ» ասում է մայրը, որը աղքատության պատճառով չի կարողանում աղջկան ամուսնացնել:

Նկարագրելով Թիֆլիսի կյանքի առօրյան, Աբովյանը ցույց է տալիս սոցիալական այն հակասությունները, որ իր հետ բերում է կապիտալի նախնական կուտակման տենչը: Մարդիկ ամեն ստոր միջոցի դիմում են՝ հարստանալու, եկամտաբեր պաշտոն ձեռք բերելու համար: Հետաքրքրական:

է, որ Աբովյանը նկարագրում է մարդկանց, որոնք քաղաքից-քաղաք թափառելուց և հաջողություն չունենալուց հետո, Թիֆլիս են գալիս ձեռնտու ամուսնության ծրագրով, և երբ հասնում են իրենց նպատակին՝ կարճ ժամանակում վատնում են ամբողջ հարստությունը և մի օր գաղտնի հեռանում: «...Բոլորն էլ փողի ծարավ են գդում, փողի համար են ամուսնանում. դեհ, թող բանաստեղծները իրենց գլուխը տրաքացնեն թե ամենագեղեցիկը աշխարհիս երեսին ընտանեկան երջանկությունն է... փողն է ամենամեծ երջանկությունը աշխարհիս երեսին»¹ գրում է Աբովյանը դառն հեգնանքով ու զայրույթով:

Որ ակնարկում Աբովյանը ամենասուր քննադատության է ենթարկում եկեղեցին ու հոգևորականությունը, ցույց տալով այն վիճը, որ գոյություն ունի ժողովրդի և հոգևորականության մեջ:

Աբովյանադետների տեսադաշտից դուրս մնացած վերոհիշյալ անտիպ հոգվածները կազմում են մեծ լուսավորչի գրական ժառանգության կարևոր հատվածը: Այդ հոգվածներով լրացվում և ամբողջանում է Աբովյանի գրական-հասարակական դիմանկարը: Դրանք ավելի են ընդգծում և ակնառու դարձնում հեղինակի ժողովրդայնությունն ու դեմոկրատիզմը, նրա հայրենասիրությունը, հումանիզմը և հատկապես Ռուսաստանի և ռուս ժողովրդի նկատմամբ՝ նրա յունեցած մեծ սերն ու երախտագիտությունը:

¹ ՓԱ Գրական թանգարան, Ս. Աբովյանի ֆոնդ, № 38, տես հայերեն թարգմանությունը: